

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

Չորեքշաբթի, 11 Յունուար. Երեկոյեան ժամը 4-ին, Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Սեւան Արքեպիսկոպոս Դարիպեանի գլխաւորութեամբ Սըրբոց Յակոբեանց Միաբանութիւնը Ս. Ծննդեան շնորհաւորութիւններու գնաց Ասորիներու, Դըպտիներու եւ Հապէշներու եպիսկոպոսներուն եւ միաբանութեանց:

Նոյն օրը, Բեթղէհէմի Սուրբ Ծննդեան Տաճարի Հայոց տեսուչ՝ Տ. Ասպետ Ծ. Վրդ. Պալեան ընկերակցութեամբ Տ. Վահագն Քհնյ Սինանեանի եւ Ծննդեան Տաճարի մեր Բարեշնորհ Սարկաւագներու, Ամանորի եւ Սուրբ Ծննդեան շնորհաւորութեան գնաց Սուրբ Ծննդեան Տաճարի Յունաց տեսչին եւ ծառայող միաբանութեան:

Ուրբաթ, 20 Յունուար. Առաւօտեան ժամը 10-ին, Պատրիարքարան՝ Ամեն. Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի եւ Սրբոց Յակոբեանց Միաբանութեան անդամներուն շնորհաւորելու եկան Ֆրանչիսկեան Միաբանութիւնը՝ գլխաւորութեամբ Քիւսթոտ Հայր Ֆրանչէսկո Փաթոնի: Ապա ժամը 10:45-ին, Լատինաց Պատրիարք Ամեն. Տ. Փիեր-պատիսթա Արքեպիսկոպոս Փիցապալա իր միաբաններով, եւ Սուրբ Երկրի Բողոքական, Դպտի, Ասորի, Հապէշ Ուղղափառ Եկեղեցիներու հոգեւոր պետեր եւ ներկայացուցիչներ:

Նոյն օրը երեկոյեան, Ս. Ծննդեան տօներու առիթով Երուսաղէմի Պապական Նուիրակ Գերշ. Տ. Ատուֆօ Արք. Ելանա ընկերակցութեամբ նուիրակութեան առաջին քարտուղարի այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցան Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Նոյն օրը, Ամանորի եւ Ս. Ծննդեան տօներու առիթով Երուսաղէմի մէջ Ամերիկայի դեսպանատան Պաղեստինեան գործերու վարիչ՝ Տիար Ճորճ Նոլ ընկերակցութեամբ գլխաւոր քարտուղար Ճոն Ռոպինի՝ այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի հետ:

Երկուշաբթի, 23 Յունուար. Նոր Տարուայ եւ

Սուրբ Ծննդեան տօներու առիթով Երուսաղէմի Հին քաղաքի ոստիկանապետ՝ Տիար Ալի Քոհէն, ընկերակցութեամբ Հին քաղաքի ոստիկանատան քրիստոնեաներու բաժնի պատասխանատու սպայ՝ Տիար Ալա Հ'արպի եւ իր օգնականներու այցելեց Պատրիարքարան՝ շնորհաւորելու Նորին Ամենապատուութիւն Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի:

Երկուշաբթի, 30 Յունուար. Երուսաղէմի Հին քաղաքի ոստիկանատան քրիստոնեաներու բաժնի պատասխանատու սպայ՝ Տիար Ալա Հ'արպ ընկերակցութեամբ Տիար Շուպաշ Զահեդի, այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի հետ:

Հանդիպման ընթացքին անդրադարձ եղաւ վերջին օրերուն պատահած հրեայ ծայրայեղականներու յարձակումներուն եւ ատոնց առաջին առնելու համար ոստիկանութեան ձեռնարկած քայլերուն:

Երկուշաբթի, 6 Փետրուար. Իսրայէլի մէջ Ռուսիոյ դեսպան Տիար Անատոլի Վիքթորով այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ն.Ա.Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի հետ: Հանդիպման ընթացքին Պատրիարք Սրբազան Հայրը դեսպանէն խնդրեց, որ իր խնդրանքը փոխանցէ Ռուսիոյ նախագահ՝ Տիար Վլատիմիր Փութինին, որպէսզի անոր անմիջական միջնորդութեամբ շուտափոյթ բացուի Բերձորի միջանցքը եւ Ատրպէյճանէն Մայր հայրենիք վերադարձուին մեր ռազմագերիները:

Ուրբաթ, 17 Փետրուար. Իսրայէլ կատարած իր պաշտօնական այցի ընթացքին Մուսկուայի փոխքաղաքապետ, Էքոնոմիքայի նախարար եւ արտաքին յարաբերութեանց պատասխանատու՝ Տիար Սերգէյ Չերչեմին իր պաշտօնեաներով եւ ընկերակցութեամբ Իսրայէլի մէջ Ռուսիոյ դեսպան Տիար Անատոլի Վիքթորովի այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք

Մանուկեանի հետ:

Երկուշաբթի, 13 Մարտ.- Սուրբ Երկրի Ասորիներու նոր Եպիսկոպոս՝ Գերաշնորհ Տ. Անթիմոս Ճաք Յակուբ, ընկերակցութեամբ իր երկու միաբան հայրերու կատարեց իր առաջին պաշտօնական այցը Երուսաղէմի Հայոց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի հետ:

Հանդիպմանը ներկայ էր նաեւ Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արքեպս. Ղարիպեան Սրբազան Հայրը:

Հանդիպման վերջաւորութեան Սուրբ Աթոռ-

ոյս Գահակալը Ասորի Եպիսկոպոսին յաջողութիւն եւ համբերութիւն մաղթեց իր նոր եւ կարեւոր պաշտօնին մէջ:

Երկուշաբթի, 20 Մարտ.- Սբ. Ուխտիս միաբաններէն Զուիցերիոյ Առաջնորդական Տեղապահ Հոգշ. Տ. Գուսան Վրդ. Ալճանեան ժամանեց Սբ. Աթոռ՝ Ծայրագոյն վարդապետական աստիճան ստանալու:

Նոյն օրը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբաններէն Տ. Զաքարիա Ծ. Վրդ. Բաղումեան ուխտաւորաբար ժամանեց Սբ. Աթոռ:

Պատրաստեց՝ ՆԵՐՍԵՏ ԱՔԵՂԱՅ ԱԼՈՅԵԱՆ

